

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական Ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


- 2018թ մայիս ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 5.4% (YoY) աճ: Աճ է գրանցվել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում՝ բացառությամբ արդյունաբերության, որը գրանցել է 3.1% (YoY) անկում:
- Արդյունաբերության ոլորտում թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 136.1 մլրդ դրամ: Ներքին առևտրաշրջանառությունն աճել է 8.8%-ով՝ կազմելով 230.9 մլրդ դրամ, ծառայությունների ծավալն աճել է 17%-ով (YoY)՝ կազմելով 139.6 մլրդ դրամ:
- 0.1% (YoY) աճ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 50.8 մլրդ դրամ:



- Շինարարության ոլորտում մայիս ամսին գրանցված աճը կազմել է 8.8% (YoY), իսկ հունվար-մայիսին՝ 17.4% (YoY)՝ իրականացված շինարարության ծավալը կազմելով 93.7 մլրդ դրամ:

Գնային միջավայր

- Մայիսին գնաճի տեմպերի նվազման միտումը պահպանվել է՝ տարեկան կտրվածքով արձանագրվելով 1.6% (YoY) գնաճ, այդ թվում՝ սննդամթերքի գները (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) նվազել են 0.1%-ով, ոչ պարենային ապրանքներին աճել 5.2%-ով, իսկ ծառայությունների սակագներն ավելացել 1.7%-ով (YoY):




- Գնաճի ցածր տեմպերը պայմանավորված են գյուղատնտեսական նշանակության ապրանքատեսակների գների սեզոնային նվազմամբ:
- Հունիս ամսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.9% (YoY), այդ թվում՝ սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ -1.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.3%, ծառայությունների սակագներինը՝ 1.4% (YoY):
- Մայիսի համեմատ հունիսին գրանցվել է 1.6% գնանկում (MoM)՝ առավելապես պայմանավորված սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 3.9% գնանկմամբ (MoM): Սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների անկումը կազմել է համապատասխանաբար 3.4%, 0.3% և 0.1% (MoM):


ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ մայիսին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 92.8 մլրդ դրամ, ծախսերը՝ 137.7 մլրդ դրամ՝ արդյունքում գրանցելով 44.9 մլրդ դրամի դեֆիցիտ:
- Նախորդ ամսվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտները նվազել են 29%-ով, իսկ ծախսերն ավելացել 44%-ով (MoM):¹

¹ 2018թ ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և տուրքեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:




- ՀՀ պետական պարտքն 2018թ մայիսին կազմել է 6.75 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 10.8%-ով (YoY): Ապրիլ ամսվա համեմատ ՀՀ պետական պարտքի մեծությունը նվազել է 1.75%-ով (MoM):
- Միայն արտաքին պարտքը մայիսի վերջի դրությամբ կազմել է 5.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելանալով տարեկան 11.8%-ով (YoY): Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավելացել է 7.7%-ով (YoY)՝ կազմելով 1.26 մլրդ ԱՄՆ դոլար:
- Հաշվի առնելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ բնակչության մեկ շնչի հաշվով պարտքը կազմում է 2,274.3 ԱՄՆ դոլար (2018թ ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2,969,900 մարդ):



ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ


Արտաքին առևտուր

- 2018թ մայիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 578.2 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 28%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 17.6%՝ հասնելով 171.4 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 32.8%-ով (YoY)՝ մինչև 406.8 մլն ԱՄՆ դոլար:
- 2018թ ապրիլի նկատմամբ մայիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշն աճել է 7%-ով (MoM): Արտահանման ծավալները կրճատվել են 4.8%-ով, ներմուծման ծավալներն՝ ավելացել 13%-ով (MoM):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը մայիսին 2017թ մայիսի համեմատ խորացել է 46.6%-ով (YoY)՝ մինչև -235.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ ապրիլյան ցուցանիշի համեմատ՝ 30.7%-ով (MoM):



Դրամական հոսքեր

- 2018թ մայիսին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա մայիսի համեմատ կրճատվել է 30.4%-ով՝ կազմելով 47.3 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ ցուցանիշն աճել է շուրջ 50%-ով:
- ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումները մայիսին ապրիլի համեմատ ավելացել են 33%-ով (MoM), իսկ դեպի ԱՄՆ գրանցվել է դրամական միջոցների արտահոսք՝ 0.5 մլն ԱՄՆ դոլարի չափով:




ՀՀ դրամական միջոցների զուտ ներհոսք, կառուցվածք ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար


	Մայիս 2017թ	Ապրիլ 2018թ	Մայիս 2018թ	%, MoM	%, YoY
Զուտ Ներհոսք	68.0	31.7	47.3	49.4	-30.4
այդ թվում՝					
ՌԴ	52.0	38.7	51.4	32.8	-1.1
ԱՄՆ	3.5	0.2	(0.5)	-114.1	-144.1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ մայիսին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված դրամային վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 18%-ով (YoY)՝ կազմելով 1.1 տրլն դրամ, արտարժույթայինը՝ 13.8%-ով (YoY)՝ կազմելով 1.8 տրլն դրամ:



- Բանկերի կողմից ներգրավված դրամային ավանդների ծավալները նույն ամսում ավելացել են 16.8%-ով (YoY)՝ կազմելով 1.1 տրլն դրամ, իսկ արտարժույթով ավանդների ծավալները՝ 2%-ով (YoY)՝ կազմելով 1.5 տրլն դրամ:
- Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա դրամով վարկերի միջին տոկոսադրույքը 2017թ մայիսի համեմատ 2018թ մայիսին նվազել է 2.5 կետով՝ մինչև 13.3% մակարդակը, արտարժույթային վարկերինը՝ 1.0 կետով՝ մինչև 8.9%, դրամային ավանդների տոկոսադրույքների միջին մակարդակը նախորդ տարվա մայիսի 10.2%-ից 2018թ մայիսին նվազել է մինչև 8.9%, իսկ արտարժույթայիններինը՝ 4.5%-ից մինչև 3.4%:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- ԱՄՆ դոլար:** Հունիս ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի ինդեքսի աճը միջինում կազմել է 1.5%: Առհասարակ, տարվա երկրորդ քառորդում որպես ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդման երկու առանցքային գործոն են հանդես եկել ԴՊՀ կողմից ԴՎՔ բազային տոկոսադրույքի 50 բազիսային կետով բարձրացումն ու ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև առևտրային պատերազմի վտանգը:
- Հունիսի 13-ին կայացած նիստում ԱՄՆ ԴՎՔ բազային տոկոսադրույքը բարձրացվեց 0.5 կետով՝ մինչև 2% մակարդակը: Ներկայումս տոկոսադրույքի տատանման միջակայքն է 1.75%-2%:
- ԱՄՆ դոլարի վարքագծի վրա առավել մեծ ազդեցություն է գործում ԱՄՆ և Չինաստանի միջև առևտրային լարվածությունը: Թեև մինչ այժմ առկա էր մտավախություն, որ առևտրային պատերազմը կհանգեցնի դոլարի նկատմամբ պահանջարկի նվազման, տեղի ունեցավ հակառակը, և շուկայի մասնակիցների կողմից ԱՄՆ նախագահի ակտիվ քայլերը միջազգային առևտրում մեկնաբանվեցին որպես վտանգ հակադիր երկրների համար:
- Չինաստանից ԱՄՆ ներկրվող 34 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով ապրանքների նկատմամբ բարձրացված մաքսատուրքերն ուժի մեջ մտան հուլիսի 6-ից: Որպես պատասխան քայլ Չինաստանը բարձրացված մաքսային դրույքաչափեր է կիրառել ԱՄՆ-ից ներկրվող միևնույն ծավալի ապրանքների նկատմամբ: Մոտակա շաբաթների ընթացքում ակնկալվում է ԱՄՆ

կողմից ևս 16 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի բարձրացում, իսկ Չինաստանի կողմից համարժեք պատասխանի դեպքում՝ ԱՄՆ կողմից ևս 500 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ ապրանքների նկատմամբ բարձրացված մաքսատուրքերի սահմանում:

- ԱՄՆ-Չինաստան առևտրային սրված հարաբերությունները մտավախություններ են առաջացրել Չինաստանից կապիտալի արտահոսքի վերաբերյալ:
- Ընթացիկ տարում ԱՄՆ ԴՊՀ կողմից նախատեսվում է ԴՎՔ բազային տոկոսադրույքի առնվազն ևս մեկ կամ երկու բարձրացում: Նման քաղաքական և մոնետար ազդակների առկայությունը հանդիսանում է փոխարժեքի շարժի վրա ազդող առավել էական գործոն, որը հաջորդ եռամսյակում նույնպես ակնկալվում է, որ կհանգեցնի ԱՄՆ դոլարի նկատմամբ պահանջարկի պահպանմանը:



- **EUR/USD:** Հունիսի 14-ին կայացած ԵԿԲ նիստում ԴՎՔ տոկոսադրույքները մնացին անփոփոխ (վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0.0%, ավանդադրման տոկոսադրույք՝ -0.4%), և Բանկի կողմից նշվեց, որ դրանք անփոփոխ կմնան առնվազն մինչ 2019թ ամառ, մինչդեռ ակտիվների գնման ծրագիրը նախատեսվում է դադարեցնել 2018թ դեկտեմբերին:

- ԵԿԲ գնահատմամբ գնաճը տարածաշրջանում կշարունակի աճել (1.7%) առավելապես ներկրվող ինֆլյացիայի հաշվին, մինչդեռ ԵԿԲ՝ 2018թ համար ՀՆԱ-ի կանխատեսումները նվազեցվել են մինչև 2.1% մակարդակը՝ նախկին 2.4%-ից: Վերջինիս հիմքում պրոտեկցիոնիստական ճնշումներն ու համաշխարհային տնտեսության առանցքային խաղացողների միջև առևտրային դիսկերն են: ԵՄ անդամները հավանություն են տվել Եվրոպական խորհրդի՝ ԱՄՆ կողմից արտահանվող շուրջ 2.8 մլրդ եվրո (3.3 մլրդ ԱՄՆ դոլար) արժողությամբ ապրանքների նկատմամբ 25 տոկոսանոց մաքսատուրքի կիրառման պլանին՝ ի պատասխան ԱՄՆ



քայլերի: Նշենք, որ դեպի ԱՄՆ արտահանվող և բարձրացված մաքսային դրույքաչափով հարկվող եվրոպական ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 6.4 մլրդ եվրո:

- Բացի տնտեսական գործոններից եվրոյի դիրքերի զսպման ուղղությամբ մեկ այլ գործոն էր Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելի ձևավորած միասնական կառավարության փլուզման վտանգը՝ միգրացիոն հարցերի շուրջ ծագած անհամաձայնությունների հետևանքով: Սակայն հուլիսի սկզբին հաջողվեց հասնել քաղաքական համաձայնության:
- EUR/USD փոխարժեքի անկումը հունիս ամսվա ընթացքում կազմեց շուրջ 0.7%՝ ամսվա սկզբի միջին 1.1770-ից հասնելով 1.1685-ի:

- **GBP/USD:** Հունիս ամսին բրիտանական ֆունտի դիրքերն այլ հիմնական արժույթների նկատմամբ գրանցել են նվազող դինամիկա: Թեև ԱՄՆ դոլարի նկատմամբ անկումը մեծապես կապված է դոլարի դիրքերի ամրապնդմամբ, ֆունտի անկման գործում առանցքային դերը պատկանում է Բրեքսիթի գործընթացում գրանցվող բարդություններին: Վարչապետ Թ.Մեյի առջև ներկայիս փուլում ծառացած խնդիր է մաքսային հարցերի շուրջ ներքին և արտաքին համաձայնության ձեռքբերումը:






- Ինչ վերաբերում է երկրի տնտեսական ցուցանիշներին, ապա դրանք առավելապես դրական են. արդյունաբերության, ծառայությունների, շինարարության ոլորտներում գրանցվում է դրական դինամիկա, և տնտեսական ակտիվության բաղադրյալ ինդեքսը հունիս ամսին գրանցել է վերջին ութ ամիսների առավելագույն ցուցանիշը (55.2): Անգլիայի Բանկի նախագահ Մ.Քարնիի գնահատմամբ արդեն իսկ զգացվում է դրամավարկային քաղաքականության խստացման անհրաժեշտություն, և օգոստոսին ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը շուկայի մասնակիցների կողմից գնահատվում է 80%:
- Հունիս ամսվա ընթացքում GBP/USD փոխարժեքը նվազել է 2%-ով՝ 1.3420 դոլար ֆունտի դինաց միջին արժեքից մինչև 1.3150 դոլար ֆունտի դինաց արժեքը:
- **USD/RUB:** Հունիս ամսվա առաջին կեսին ռուբլու դիրքերն արժույթային շուկայում գրանցեցին նվազող դինամիկա (3%՝ 62.2 ռուբլի դոլարի դինաց միջին արժեքից մինչև 64 ռուբլի արժեքը)՝ նավթի գների աճող դինամիկայի շնորհիվ որոշ չափով վերականգնվելով միայն ամսվա վերջին: Ռուբլու զուսպ դիրքերի հիմքում երկրում արտարժույթային իրացվելության դեֆիցիտի խորացումն է:

- Վերջինիս առանցքային պատճառները բանկերի կողմից արտաքին պարտքի մարման անհրաժեշտությունը, ռուսաստանյան պետական պարտքի շուկայից օտարերկրյա կապիտալի արտահոսքն (ապրիլ-մայիս ամիսներին որ ռեզիդենտ ներդրողների կողմից վաճառվել է 231 մլրդ ռուբլու պետական պարտատոմս) ու երկրի կառավարության գործողություններն են՝ ուղղված նավթագազային լրացուցիչ եկամուտների հաշվին արտարժույթի ավելացված ներհոսքի չեզոքացմանը: Պետական բյուջեի օրենքով 2017թ փետրվարից սկսած երկրի կառավարությունը ԿԲ-ի միջոցով բորսայից ձեռք է բերում բյուջեի՝ բարելի դիմաց 40 ԱՄՆ դոլար արժեքից բարձր գնով վաճառված նավթից ստացված լրացուցիչ նավթագազային եկամուտները: Նախորդ տարի այդ նպատակին է ուղղվել 900 մլրդ ռուբլի, ընթացիկ տարում պլանավորված է ուղղել 2.74 տրլն ռուբլի, իսկ 2019թ՝ 3.42 տրլն ռուբլի: Մոտակա երեք տարիների պլանով նախատեսված է շրջանառությունից դուրս բերել ընթացիկ հաշվին ստացվող արտարժույթի զուտ ներքոսքի շուրջ 2/3-ը: Նպատակը ազգային արժույթի փոխարժեքի տատանողականության զսպումն է, բիզնեսի և բնակչության համար դոլարի հասանելիության նվազեցումն ու, արդյունքում, նավթի նույնիսկ ռեկորդային բարձր գների պայմաններում ռուբլու արժևորման չեզոքացումը:
- Հունիս ամսվա վերջին, Ռայֆայգենբանկի մասնագետների գնահատմամբ, ռուսաստանյան բանկերի սեփական իրացվելի արտարժույթային ակտիվների ծավալը միայն 1.7 մլրդ դոլարով էր գերազանցում հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների ծավալը: Երկրում դոլարով միջբանկային վարկավորման միջին տոկոսադրույքը եթե մինչև մարտ ամիսը 1.4% էր, ապա ապրիլից՝ 1.7%, իսկ հունիս ամսին՝ 1.9%:
- Շուկայի կարգավորման նպատակով ՌԴ Ֆինանսների նախարարությունն ընդունել է դոլարային լիկվիդայնության դեֆիցիտի շեմին կանգնած բանկային համակարգին աջակցելու մեխանիզմի ընդլայնման որոշում: 2018թ աշնան ամիսներից դաշնային գանձապետարանը կմեկնարկի սվոպերի շուկայի միջոցով բանկային համակարգի վարկավորման ծրագիր, որի շրջանակներում բանկերը կստանան երկրի բյուջեից ռուբլու գրավով արտարժույթ ներգրավելու հնարավորություն:
- Հաշվի առնելով արտաքին պարտքի գծով նախատեսված մարումները սակայն՝ ՌԴ Ֆինանսների նախարարության գործողությունները միայն կզսպեն մեծացող դեֆիցիտի մասշտաբները:



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- **Նավթի շուկա:** 2018թ. հունիս ամսվա ընթացքում կտրուկ տատանումներ են գրանցել նավթի համաշխարհային գները:
- Brent տեսակի նավթի գինն ամսական կտրվածքով գրանցել է մոտ 2.38% աճ՝ դեպի վեր հատելով 79.6 ԱՄՆ դոլար արժեքի սահմանը:
- Հունիսի 22-ին Վիենայում կայացած հանդիպման ժամանակ ՕՊԵԿ-ի անդամ և այլ նավթ արտահանող երկրների ներկայացուցիչները համաձայնության եկան նավթի արդյունահանման ծավալներն ավելացնել 1 մլն բարել/օրով:
- Նավթի գների աճին նպաստող գործոնը Լիբիայի, Վենեսուելայի և Կանադայի կողմից նավթի արտահանման խաթարումներն ու Իրանական նավթի արտահանման նկատմամբ ԱՄՆ սահմանած պատժամիջոցներն են:
- Որպես նավթի գնի վրա ճնշում գործադրող գործոն շարունակում է հանդես գալ ԱՄՆ կողմից նավթի արդյունահանման ծավալների անընդհատ աճը:
- ԱՄՆ էներգետիկ տեղեկատվության կենտրոնի (EIA) տվյալներով հունիսի 29-ի դրությամբ նավթի արդյունահանման օրական ծավալները հասել են 10.9 մլն բարելի:
- Չնայած արդյունահանման ծավալների աճին՝ հունիս ամսվա ընթացքում զգալի կրճատումներ են գրանցել ԱՄՆ նավթային պաշարները: Հունիս ամսվա ընթացքում 3 շաբաթ անընդմեջ զգալի կրճատումներից հետո 4-րդ շաբաթում գրանցվել է 1.2 մլն բարելով աճ:



- Ոսկու շուկա:** 2018թ. հունիս ամսվա ընթացքում ոսկու գինը գրանցեց մոտ 3.75% անկում՝ մինչև 1,250 դոլար ունցիայի դիմաց մակարդակը: 2017թ օգոստոսից հետո սա գրանցված առավելագույն ամսական անկումն է: Ընդհանուր առմամբ, 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում ոսկու գների ամսական աճ է գրանցվել միայն հունվար (-2.5%) և մարտ (-0.55%) ամիսներին, ինչի արդյունքում տարվա սկզբից վերջինիս անկումը կազմել է մոտ 4%:
- Տարվա սկզբից զգալի փոփոխություններ են գրանցվում ոսկու նկատմամբ վերջինիս խոշորագույն սպառողներից Հնդկաստանում՝ կապված վերջինիս կողմից ներկայացվող պահանջարկի հետ: Տարվա առաջին կիսամյակի ընթացքում Հնդկաստանի կողմից ոսկու նկատմամբ պահանջարկը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ գրանցել է զգալի անկում: 2018թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում 2017թ. հնույն ժամանակահատվածի համեմատ մոտ 40%-ով Հնդկաստանում նվազել են ոսկու ներմուծման ծավալները:
- Ոսկու գնի վրա բացասաբար են ազդում նաև ԱՄՆ դոլարի զգալի ուժեղացումն ու առաջիկայում ԱՄՆ ՖԴՀ կողմից դրամավարկային քաղաքականության խստացումները՝ իրականացնելու սպասումները: Հունիս ամսին ոսկու գնի կտրուկ անկում գրանցվեց ԱՄՆ ՖԴՀ նիստից հետո, երբ որոշվեց ԴՎՔ բազային տոկոսադրույքը բարձրացնել 0.25 կետով՝ այն սահմանելով 1.75%-2% միջակայքում:

